ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Սույն հայտարարությունը հրապարակվում է «18» ապրիլի 2024թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է «**ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար՝ Տվյալների պահպանման SAN համակարգի՝ HDD կոշտ սկավառակի ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության CBA-2024-007 ծածկագրով գնանշման հարցման**» ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակիցների ընտրությունը հիմնավորող պատճառների, անգործության ժամկետի և շահերի բախման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Գնանշման հարցմանը մասնակցել են հետևյալ կազմակերպությունները՝

1. **«Բի Լայն» ՍՊԸ**
2. **«Տեխնոֆորում» ՍՊԸ**
3. **«Դոքս Քոմպյուտեր» ՍՊԸ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «18» ապրիլի 2024թ. նիստի ընթացքում ամփոփվել է վերը նշված գնանշման հարցման արդյունքները: Հաղթող մասնակից է ճանաչվել **«Բի Լայն» ՍՊԸ-ն:**

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 10 (տասը) օրացուցային օր է:

Սույն ընթացակարգի շրջանակում շահերի բախում չի հայտնաբերվել:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ